Ասլանը ինձ յետոյ ասաց, թէ այդ մարդը ամենեւին հիւանդութիւն չունէր, թէ իր տոած մի քանի դեղերը միայն նրա երեւակայութիւնը գոհացնելու համար էին գործ դրոած: Բայց աւելի հաւանականն այն էր, որ խորամանկ փաշան իր հիւանդութիւնը իբրեւ մի պատրոակ էր ընտրել՝ բժշկին մի քանի օր աւելի Վանում պահելու համար, որպէսզի իր նրա վերաբերութեամբ ունեցած կասկածները ստուգէ: Թէ այսպէս, թէ այնպէս, այդ տեսակ բացարձակ շողոքորթութիւններ արեւելքում ոչ միայն սովորութեան, այլեւ քաղաքավարութեան կարգն են անցել, եւ Ասլանը, հետեւելով տեղային սովորութեանը, դարձաւ դէպի առաջնորդը այդ խօսքերով.

— Չգիտեմ, որպէս շնորհակալ լինեմ ձեզանից, սրբազան հայր, ձեր յանձնարարական թուղթը ինձ շատ եւ շատ օգնեց, ես համարեա մեծ մասամբ հասայ նպատակիս:

— Այդ մեր պարտաւորութիւնն է, պարոն բժշկապետ, մեր կարեաց չափ բաւականութիւն տալ մեր կողմերը եկած ճանապարհորդների հետաքրքրութեանը, օգնել նրանց երկիրը, ժողովուրդը ուսումնասիրելու, եւ աշխատել՝ ամէն կերպով դիւրութիւններ մատուցանել նրանց՝ իրանց նպատակներին հասնելու: Բայց, ցաւում եմ, շատ ցաւում եմ, որ ես չկարողացայ նախատեսել Կտուց անապատը գնալու վտանգը: Մեր ծովը փոքրիկ է, բայց բաւական կատաղի է: Միայն ուրախ եմ, շատ ուրախ, որ ձեզ յաջողել է քաջութեամբ ազատել:

Առաջնորդը յիշեցնում էր մեր Կտուց անապատը գնալու ժամանակ կրած ալեկոծութիւնը: Երեւում էր, որ նրան արդէն յայտնի էին մեզ հետ պատահած անցքերը: Նա աւելացրեց.

— Դուք, պարոն բժշկապետ, տեսնում եմ, որպէս լաւ բժիշկ էք, նոյնպէս եւ լաւ նաւավար ու ճարպիկ լողորդ էք: Ես մեծ հիացմամբ լսեցի ձեր կատարած քաջութիւնը ալեկոծութեան ժամանակ:

Ասլանը պատասխանեց.

— Մեր երկրում, սրբազան հայր, վաղուց արդէն կրթութեան եւ դաստիարակութեան կարգն է անցել, սկսեալ մանկութիւնից, պատրաստել մարդուն այնպէս, որ նա կեանքի մէջ ընդունակ լինի ամէն վտանգների հետ պատերազմելու: Երբ ծովի հետ գործ ունես, պէտք է կանխապէս սովորած լինես, թէ ինչպէս պէտք է վարոել նրա ալիքների հետ...

Այդ բոլոր խօսակցութիւնը, որպէս նկատում էի, մի տեսակ խուլ հակաճառութիւն էր զանազան նուրբ ակնարկութիւններով եւ զանազան երկդիմի